# Արձանագրություն N 2

«ԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/18» ծածկագրով **«հատուկ տեխնիկայի/էքսկավատոր ամբարձիչ/ և ինքնաթափ բեռնատար»** գնման ընթացակարգի **«Գնահատող անձնաժողովի բացման նիստի»**

ք. Մարալիկ, «29» Օգոստոսի 2019թ.
Ժ 11 : 30

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝** Հովհաննես Ալեքյանը,

**Հանձնաժողովի անդամներ՝** Լուիզա Վարժապետյանը (ԳԱ), Նարեկ Նիկոյանը ԳԱ), Արամ Մարտիրոսյանը (ԲԱ), Նարեկ Նիկոյանը (ԲԱ),

**Հանձնաժողովի քարտուղար՝** Շուշանիկ Բոթոյանը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(զեկուցող՝ Հ. Ալեքյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
7. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
8. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
9. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

*Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
(զեկուցող՝ Հ. Ալեքյան)

1. Ընդունել ի գիտություն, որ

Սահմանված ժամկետում գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Հասցե | Էլ. փոստի հասցե |
|---|---|---|---|
| 1 | «ԻԿՈ» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն ,<br>ՀՎՀՀ 02604633 | karamyantsds@iko.group |
| 2 | «Սպեցմաշ» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն,<br>ՀՎՀՀ 06947049 | specmashllc@mail.ru |

*Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
(զեկուցող՝ Հ. Ալեքյան)

Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝ «ԻԿՈ» ՍՊԸ, «Սպեցմաշ» ՍՊԸ

*Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0:*

4.Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

(զեկուցող՝ Հ. Ալեքյան)

«ԻԿՈ» ՍՊԸ, «Սպեցմաշ» ՍՊԸ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը պարունակում են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

5.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

(զեկուցող՝ Հ. Ալեքյան)

Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր կազմել և ներկայացրել են «ԻԿՈ» ՍՊԸ, «Սպեցմաշ» ՍՊԸ:

*Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

6.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

(զեկուցող՝ Հ. Ալեքյան )

1.Ընդունել ի գիտություն, որ.

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար՝ «հատուկ տեխնիկայի/էքսկավատոր ամբարձիչ/ և ինքնաթափ բեռնատարի» ձեռքբերումը: Պայմանագիրը կատարելու համար մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չ/Հ | Անվանում | Նախահաշվային գին ըստ գնումների պլանի | Մասնակիցներ | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր |
| 1 | էքսկավատոր ամբարձիչ | 43251100 | «ԻԿՈ» ՍՊԸ | 28 680 000 | 5 736 000 | 34 416 000 |
| | | | «Սպեցմաշ» ՍՊԸ | -- | -- | -- |
| 2 | ինքնաթափ բեռնատարի | 34131170 | «ԻԿՈ» ՍՊԸ | -- | -- | -- |
| | | | «Սպեցմաշ» ՍՊԸ | 20 085 000 | 4 017 000 | 24 102 000 |

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան տառային և թվային տարբերակների միջև անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց ԱԱՀ-ի գումարի հաշվարկման:

*Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

7.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

(զեկուցող՝ Հ. Ալեքյան)

**1.** 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԻԿՈ» ՍՊԸ –ին, որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով

**2.** Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

**3.** Էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

*Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0:*

8. <u>Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:</u>

<u>(զեկուցող՝ Հ. Ալեքյան )</u>

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն գրանցվել:

*Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

9. <u>Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին</u>

<u>(զեկուցող՝ Հ. Ալեքյան)</u>

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից տեղեկատվության ստացման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացնրած փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին:

*Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Հ. Ալեքյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Ա. Մարտիրոսյան

____________ Մ. Մարտիրոսյան

____________ Լ. Վարժապետյան

____________ Ն. Նիկոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Շ. Բոթոյան